

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/6**

**29 մարտի 2016 թ.**

Քննարկվեց «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ 02.03.2016թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 04.02.2016թ-ի թիվ 6112703 ակտի դեմ:

**«Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 19.01.2016թ. թիվ 6112703 հանձնարարագրի հիման վրա «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում:

Հարկ է նշել, որ 2016թ-ի հունվարի 26-ին ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ աշխատակիցների կողմից կազմվել է արձանագրություն (այսուհետ՝ Արձանագրություն 1), այն մասին, որ Ընկերությանը պատկանող ք.Երևան, Ամիրյան 1 հասցեում շահագործվող Կուչինա Ռեստորանում տեղադրված են թվով երկու հատ ՀԴՄ՝

1. Գործարանային համար Q80414503145, Գրանցման համար՝ 51607242,

2. Գործարանային համար V90413506513, Գրանցման համար՝ 51605078, Որոնցից թիվ 51607242 գրանցման համարով ՀԴՄ-ն տվյալ պահին շահագործվում էր և միացված էր համակարգին, իսկ թիվ 51605078 գրանցման համար ունեցող ՀԴՄ-ն գտնվում էր անջատված վիճակում: Վերոնշյալ Արձանագրությունը կազմվել է Արմենիա հյուրանոցային համալիր ՓԲԸ-ի աշխատակից Արտակ Մխիթարյանի ներկայությամբ, սակայն նա որպես կողմ Արձանագրության մեջ ներգրավված չէր: Սույն թվականի հունվարի 27-ին ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ-ի աշխատակիցների կողմից ներկայացվել է մեկ այլ արձանագրություն (այսուհետ Արձանագրություն 2): Արձանագրություն 2-ը բովանդակային առումով համապատասխանում է Արձանագրություն 1-ին, սակայն Արձանագրություն 2-ի մեջ ապահովված է Արմենիա հյուրանոցային համալիր ՓԲԸ-ի աշխատակից Արտակ Մխիթարյանի ներկայությունը: Վերոգրյալից պարզ է դառնում, որ ստուգման ակտի համար հիմք հանդիսացած երկրորդ արձանագրությունը կազմվել է ստուգման ավարտից հետո:

Ստուգման արդյունքում 27.01.2016թ-ին կազմվել է թիվ 6112703 ակտի նախագիծ, որի վերաբերյալ Ընկերությունը ներկայացրել է առարկություն, նախագծով առաջադրված խախտումը վերացնելու նպատակով, սակայն առարկությունը չի ընդունվել և 2016թ-ի փետրվարի 4-ին կազմվել է թիվ 6112703 ակտը (այսուհետ՝ Ակտ):

Ակտում նշված է, որ կազմակերպությունը խախտելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և ՀՀ Կառավարության 846-Ն որոշման հավելված 1-ի 13-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը, համաձայն որի ՀԴՄ կտրոնի վրա պետք է տպագրված լինի օբյեկտի գործունեության հասցեն ք.Երևան, Ամիրյան 1 հասցեի 3-րդ հարկում գործող հանրային սննդի ծառայություններ մատուցող ռեստորանում շահագործվել է ք.Երևան, Ամիրյան 1 1-ին հարկ հասցեում գրանցված ՀԴՄ, որի համար Ընկերության առաջադրվել է տուգանք 600.000 դրամի չափով:

Ընկերությունը գտնում է, որ կատարված գործողություններն անհիմն են և չեն բխում օրենքի պահանջներից, հետևյալ հիմնավորմամբ և պատճառաբանությամբ.

1. Ընկերության կողմից շահագործվող Ռեստորանի հասցեն է ք.Երևան, Ամիրյան փ. 1, իսկ ինչ վերաբերվում է ակտում նշված 1-ին հարկ և 3-րդ հարկ տարանջատումներին, ապա հարկ է նշել, որ դրանք ներքին տարանջատումներ են, և որևէ կերպ չեն հակասում կամ լրացնում օբյեկտի գործունեության հասցեն: Միաժամանակ հարկ է նշել, որ տվյալ դեպքը որպես խախտում արձանագրման համար անհրաժեշտ էր ապացուցել, որ այն կատարված է մեղավորությամբ: Տվյալ պարագայում դեպքը կատարվել է ոչ միտումնավոր և տեղի ունեցածում բացակայում է ընկերության մեղքը:

2. ՀՀ Կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջների 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն. «ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝

3) օբյեկտի գործունեության հասցեն.»

Միաժամանակ, ՀՀ Կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի (N 2 հավելված) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն. «Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում՝

1) որոշման N 1 հավելվածով սահմանված ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա որևէ տեղեկատվության (տվյալի) բացակայությունը (բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի) կամ անընթեռնելիությունը (անգնեն աչքով կտրոնի վրա արտացոլված տվյալներն ընթերցելու անհնարինությունը).»:

Հետևաբար, Ռեստորանում ՀԴՄ-ի վրա, որպես տեղեկատվություն տպագրված է եղել օբյեկտի գործունեության հասցեն, այն է՝ ք.Երևան, Ամիրյան 1: Ուստի, օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով և որպես խախտում դիտարկելու համար անհրաժեշտ պայման հանդիսացող ՀԴՄ կտրոնի վրա որևէ տեղեկատվության (օբյեկտի գործունեության հասցեն) բացակայության և/կամ անընթեռնելիության փաստերից և ոչ մեկը տվյալ դեպքում չի արձանագրվել:

Տվյալ դեպքում Ընկերությունը բովանդակային առումով կատարել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված իր վրա դրված պահանջները:

3. Գանգատում բերված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 7-րդ հոդվածի դրույթները:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովն իր բազմաթիվ որոշումներում անդրադառնալով նման պայմաններում «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 11-րդ հոդվածներով և ՀՀ Կառավարության 846-ն որոշման հավելված 1-ով և հավելված 2-ով սահմանված պայմաններին և տուգանքների կիրառման հարցին հայտնել է, որ ըստ էության ՀԴՄ կտրոնի վրա տպագրված է անհրաժեշտ և օրենքով պահանջված տեղեկատվությունը, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են և որ խախտման փաստի առկայության համար անհրաժեշտ է, որպեսզի ընկերության կողմից խախտումը կատարված լինի մեղավորությամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, 7-րդ հոդվածը և 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը և նույն հոդվածի 2-րդ կետը, ընկերությունը խնդրում է չեղյալ ճանաչել ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 04.02.2016թ-ի թիվ 6112703 ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ պետի 19.01.2016թ-ի թիվ 6112703 հանձնարարագրի համաձայն «Արմենիա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ում կատարվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է Խոշոր հարկ վճարողների ՀՏ 04.02.2016թ-ի թիվ 6112703 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 600.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ կազմակերպությունը խախտելով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և ՀՀ կառավարության թիվ 846-Ն որոշման Հավելված 1-ի 13-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը, համաձայն որի ՀԴՄ կտրոնի վրա պետք է տպագրված լինի օբյեկտի գործունեության հասցեն, ք.Երևան, Ամիրյան 1 հասցեի 3-րդ հարկում գործող հանրային սննդի ծառայություններ մատուցող ռեստորանում շահագործել է ք.Երևան, Ամիրյան 1 հասցեի 1-ին հարկ հասցեում գրանցված ՀԴՄ:

Վերը նշված պահանջի խախտումը համաձայն ՀՀ կառավարության թիվ 846-Ն որոշման Հավելված 2-ով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 40-րդ կետի, դիտվում է որպես հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտում, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետով նախատեսված պատասխանատվությունը՝ գումարով 600.000 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

ՀՀ Կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջների 13-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն. «ՀԴՄ-ի կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝

...

3) օբյեկտի գործունեության հասցեն.»:

Իր հերթին, ՀՀ Կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն. «Օրենքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում է դիտվում՝

1) որոշման N 1 հավելվածով սահմանված ՀԴՄ կտրոնի վրա տպագրման ենթակա որևէ տեղեկատվության (տվյալի) բացակայությունը (բացառությամբ սույն

կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի) կամ անընթեռնելիությունը (անզեն աչքով կտրոնի վրա արտացոլված տվյալներն ընթերցելու անհնարինությունը)»:

Քննարկվող դեպքում իրականացված ստուգմամբ կազմակերպության ք.Երևան, Ամիրյան 1 հասցեի 3-րդ հարկում գործող հանրային սննդի ծառայություններ մատուցող ռեստորանում, նույն հասցեի 1-ին հարկում գրանցված ՀԴՄ-ի շահագործման հանգամանքը դիտվել է որպես ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ դրամարկղային մեքենաներին ներկայացվող տեխնիկական պահանջների 13-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտման՝ ՀԴՄ կտրոնի վրա օբյեկտի գործունեության հասցեի բացակայության փաստ, ինչն էլ իր հերթին հիմք է հանդիսացել նույն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն, նշված հանգամանքը հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտում դիտարկելու և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցը կիրառելու համար:

Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ դեպքում կազմակերպության կողմից ՀՀ կառավարության 01.08.2013թ-ի թիվ 846-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների խախտում, ըստ էության, թույլ չի տրվել, քանի որ ք.Երևան, Ամիրյան 1 հասցեի 3-րդ հարկում գործող ռեստորանում շահագործված ՀԴՄ-ի միջոցով տրամադրված կտրոնների վրա օբյեկտի գործունեության հասցեի վերաբերյալ տեղեկատվությունը, այն է՝ ք.Երևան, Ամիրյան 1, եղել է տպագրված:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 04.02.2016թ-ի թիվ 6112703 ակտի 1-ին կետը:

Հանձնաժողովի նախագահ՝

  
  
Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ